ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ, 060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2024 թվականի N 16-Ա

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2024 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2024 թվականի բյուջեից հատկացնել 3 000 000 / երեք միլիոն / ՀՀ դրամ գումար:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են մշակույթ, սպորտ, երիտասարդություն ոլորտները՝ որպես առաջնահերթություն:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ ակտիվ բնակիչները, նրան ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը, հասարակական կազմակերպությունները:
4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՅԱՅԼՈՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՌԱՊՅԱՆ ԼԻԶԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2024թ. փետրվարի 13
Խոյ համայնք, գ.Գեղակերտ